ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ԲԱԳՐԱՏԻՈՆ» ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՅԻՆ

Մ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

1943 թ. սեպտեմբերի վերջին Բրյանսկի ռազմաճակատի զորքերի մուտքը Բելոռուսիայի արևելյան շրջանները և խորհրդային զորքերի 1944 թ. հաղթանակները Լենինգրադի տակ, Ղրիմում և Աջափնյա Ուկրաինայում նպաստավոր պայմաններ ստեղծեցին Բելոռուսիայի և Մերձբալթիկայի հանրապետությունների ազատագրման համար։

1944 թ. գարնանը, Կարմիր բանակի գլխավոր հրամանատարության Ռազմակայանում, խիստ գաղտնիության պայմաններում պատրաստվում ու մշակվում էր իր ծավալներով Երկրորդ համաշխարհային պատերազմի խոշոր ռազմական գործողություններից մեկը՝ Բելոռուսական հարձակողական օպերացիան «Բագրատիոն» ծածկանվամբ։ Այդ օպերացիային մասնակցող Բելոռուսական 1-ին, 2-րդ, 3-րդ և Մերձբալթյան ռազմաճակատներին Ռազմակայանը տրամադրեց 20 համազորային, 2 տանկային, 5 օդային, 2 առանձին տանկային կորպուս, 7 ամրացված շրջան և 22 բրիգադ[1]։ Ռազմական լայնածավալ օպերացիային մասնակցող ռազմաճակատների զորքերի խմբավորման գործողությունները կոորդինացնելու էին Խորհրդային Միության երկու մարշալներ, ձախ թևը՝ Գ. Կ. Ժուկովը, իսկ աջը՝ Ա. Մ. Վասիլևսկին։

Մինչև օպերացիայի սկսվելը Ռազմակայանում և ռազմաճակատների շտաբներում մեծ, ծավալուն աշխատանք կատարվեց։ Ռազմաճակատների զորքերի հրամանատարները մի քանի անգամ կանչվեցին Մոսկվա, ուր տեղի ունեցան խորհրդակցությունները Գերագույն գլխավոր հրամանատարի մասնակցությամբ։ Օպերացիայի նախապատրաստման աշխատանքներին Խորհրդային Միության մարշալ Գ. Կ. Ժուկովի, Ա. Մ. Վասիլևսկու, բանակի գեներալ Կ. Կ. Ռոկոսովսկու, գեներալ-գնդապետներ Ի. Դ. Չերնյախովսկու, Գ. Ֆ. Զախարովի, ավիացիայի գլխավոր մարշալ Ա. Ա. Նովիկովի հետ միասին ակտիվորեն մասնակցեց հայ ժողովրդի մեծ զավակ, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը։

Մայիսի 22-ին «Բագրատիոն» հարձակողական օպերացիային մասնակցող ռազմաճակատների հրամանատարները և ռազմական խորհրդի անդամները հրավիրվեցին Մոսկվա խորհրդակցության։ Մինչև խորհրդակցության սկսվելը Հ. Խ. Բաղրամյանը հանդիպեց մարշալներ Գ. Կ. Ժուկովին ու Ա. Մ. Վասիլևսկուն և նրանցից իմացավ այդ օպերացիայի՝ Մերձբալթյան առաջին ռազմաճակատի վրա դրված դերի ու խնդիրների մասին։ Ըստ նախնական պլանի Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը պետք է Վիտեբսկից հյուսիս-արևմուտք ճեղքեին թշնամու պաշտպանությունը, գետանցեին Արևմըտյան Դվինան և գլխավոր ուժերով հարձակվեին Լեպելի, Մոլոդչենոյի ուղղությամբ։ Հ. Խ. Բաղրամյանը երկյուղ հայտնեց, որ իրադարձությունների նման զարգացման դեպքում թշնամու «Հյուսիս» բանակների խումբը, որ ամրացված էր Մերձբալթիկայում, կարող է հյուսիսից ուժեղ հակահարված հասցնել Մերձբալթյան առաջին ռազմաճակատի թևին ու թիկունքին, վտանգի տակ դնելով ամբողջ օպերացիայի հաջողությունը։ Նա առաջարկում է հա-

[1] История Второй мировой войны 1939—1945. М., 1978. Т. 9, с. 42.

բավ-արևմտյան ուղղությամբ խոր հարված հասցնելը հանձնարարել Բելոռուսական 3-րդ ռազմաճակատին, իսկ իրենց հիմնական ուժերը նետել դեպի արևմուտք։ Մարշալները ընդունեցին Բաղրամյանի ասածները և իրենք էլ գտան, որ այդպիսի սպառնալիքը իրական է և խոստացան Գերագույն գլխավոր հրամանատարին օպերացիայի վերջնական տարբերակը ներկայացնելիս զեկուցել այդ մասին[2]։

Մայիսի 23—24-ին Ռազմակայանում կայացած խորհրդակցությունում առաջարկվեց նոր պլան, որի համաձայն սկզբում պետք է շրջափակվեին ու ոչնչացվեին Վիտեբսկի և Բոբրույսկի շրջաններում գտնվող թշնամու թևային խմբերը, իսկ հետո հարվածը ուղղվեր Մինսկի խմբավորման դեմ։ Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը հարձակվելու էին Լովժա, Բեշենկովիչի, Զաշնիկի ուղղություններով, հիմնական խնդիր ունենալով «Հյուսիս» բանակների խումբը մեկուսացնել «Կենտրոն» խմբից։ Մարտական գործողությունների ամբողջ ընթացքը հաստատեց, թե որքան ճիշտ էին գեներալ Հ. Խ. Բաղրամյանի առաջարկները։ Մերձբալթյան առաջին ռազմաճակատի շտաբում օպերացիայի նախապատրաստումը գնում էր մեծագույն գաղտնիության պայմաններում։ Ռազմաճակատի ու բանակների շտաբում ուսումնասիրվում և վերլուծվում էր թշնամու ուժերի դասավորությունը, պաշտպանական բնագծերի, պաշտպանական գոտու ինժեներական սարքավորումների բնույթի, պաշտպանության խորության, ականադաշտերի մասին հետախուզական տվյալները։ Հ. Բաղրամյանի գլխավորությամբ քննվում և որոշումներ էին ընդունվում բանակների և տարբեր զորատեսակների համագործակցության, նրանց հարձակման ուղղությունների, մարտական առաջադրանքների կատարման և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ։ Ռազմաճակատի ինժեներական զորամասերը ականազերծեցին 400 ք. կմ տարածք, կառուցեցին 500 կմ ճանապարհ[3]։ Կարճ ժամանակում կուտակվեց անհրաժեշտ քանակությամբ ռազմամթերք, վառելիք, պարենամթերք և այլ նյութական միջոցներ։

Զորավարին մեծապես օգնեցին նրա մերձավոր զինակիցները՝ ռազմաճակատի շտաբի պետ, գեներալ Վ. Վ. Կուրասովը, ռազմաճակատի հրամանատարի տեղակալ Վ. Ի. Կուզնեցովը, ռազմական խորհրդի անդամ, գեներալ Դ. Ս. Լեոնովը, թիկունքի պետ, գեներալ Դ. Ա. Անդրեևը, հետախուզության պետ, գնդապետ Ա. Ա. Խլեբովը և ուրիշներ։

Բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի բնավորության կարևոր գծերից մեկը բացառիկ ճշգրտությունն էր, որը հատկապես դրսևորվեց օպերացիայի մշակման, որոշման ընդունման և այն իրականացնելու ժամանակ։ Նա իր զինակիցներից պահանջեց ներկայացնել օպերատիվ իրադրության մանրազնին, օբյեկտիվ վերլուծությունը, հիմնված հավաստի աղբյուրների վրա։ Շտաբը մշակեց և Բաղրամյանին ներկայացրեց առաջիկա հարձակման գոտում ճշգրիտ ու կոնկրետ տվյալներ թշնամու և իր ռազմաճակատի ուժերի դասավորության, նրանց մարտական վիճակի ու մարտունակության մասին։ Կատարվեցին գեներալի նաև մյուս հանձնարարությունները։

Մեծ ուշադրություն դարձվեց բժշկական ծառայության վրա։ Զորավարը համապատասխան հանձնարարականներ տվեց իր հայրենակից, ռազմաճակատի սանիտարական վարչության պետ, գեներալ Ավետիք Իգնատիի Բուռնազյանին[4]։

Զորքերի անձնակազմներում քաղաշխատանքը և մարտական ծառայական պարապմունքները անցկացվեցին անհրաժեշտ մակարդակով։ Յուրաքանչյուր հրամանատար ու զինվոր պետք է տեղյակ լիներ միջազգային դրությանը, գիտենար խորհրդա-գերմանական ռազմաճակատներում տիրող իրադրության, խորհրդային բանակի հաղթանակների, հիտլերականների ոճրա-

---

2 Ի. Գ. Բաղրամյան. Այսպես մենք հասանք հաղթանակի. Երևան, 1979, էջ 38։

3 История Второй мировой войны 1939—1945. Т. 9, с. 45.

4 Ի. Գ. Բաղրամյան. Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 362։

գործությունների մասին և այլն[5]։ Ընդհանուր հարձակումից առաջ ռազմաճակատի բոլոր միավորումներում ու զորամասերում անցկացվեցին ժողովներ ու միտինգներ։

Մերձբալթյան առաջին ռազմաճակատի հրամանատարը և ռազմական խորհուրդը, հլնելով Ռազմակայանի կողմից հաստատված օպերացիայի հիմնական դրույթներից, որոշեց թշնամու պաշտպանական գիծը ճեղքել Վիտեբսկ և Պոլոցկ քաղաքների միջև ընկած տարածքում՝ Ջերվյատկա լճից մինչև Մուրուժնիցա լիճը, գլխավոր հարվածը հասցնելով Ուլլա, Բեշենկովիչի, Ջաշնիկի ընդհանուր ուղղությամբ և Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերի հետ միասին ջախջախել թշնամու Վիտեբսկյան խմբավորումը։ Հետագայում զարգացնելով հարձակումը դեպի հարավ և հարավ-արևմուտք, գետանցել Արևմտյան Դվինան և բելոռուսական ռազմաճակատների սերտ համագործակցությամբ վճռական թևային հարված հասցնել թշնամու կենտրոնական խմբավորմանը։

Մերձբալթյան առաջին ռազմաճակատի դիմաց կանգնած էին թշնամու «Հյուսիս» բանակների խմբի 16-րդ դաշտային և «Կենտրոն» բանակների խմբի 3-րդ տանկային բանակները։ Պոլոցկի և Վիտեբսկի ուղղություններով վեց ամիսների պաշտպանության ընթացքում, 1943 թ. նոյեմբերից սկսած, հակառակորդը ստեղծել էր գերազանցապես համատարած խրամատային խորը էշելոնացված պաշտպանություն, հարմարեցված անտառաճահճային տեղանքին, լճերին և գետերին։ Ռազմաճակատի հրամանատար Հ. Խ. Բաղրամյանը և նրա զինակիցները հանգեցին ճիշտ եզրակացության, որ հարձակման արդյունավետությունը ավելի բարձր կլինի, եթե հարձակումը իրականացվի լայն ճակատով՝ Պոլոցկ—Վիտեբսկ տարածքում՝ Լովժա—Բեշենկովիչի ուղղությամբ, շրջանցելով Վիտեբսկը արևմուտքից։ Տարածքը, որտեղով պետք է հարձակվեին զորքերը, խիստ կտրտված էր անտառաճահճային զանգվածներով։ Դա թեթևացնում էր պաշտպանվողի խնդիրը և հակառակը՝ խիստ դժվարություններ ստեղծում հարձակվողի համար։ Հարձակման տեղանքը գնահատելով, ռազմաճակատի հրամանատարությունը, ելնելով մարտերի նախկին փորձից, հանգեց այն ճիշտ հետևությանը, որ օպերացիայի հաջող իրականացումը նման տեղանքում անհրաժեշտություն է դարձնում զորքերի միաժամանակյա հարձակումը ավելի լայն ճակատով՝ ճեղքելով հակառակորդի պաշտպանությունը առանձին ուղղություններով, իհարկե խստիվ պահպանելով օպերացիային մասնակցող միավորումների ու կրակային մարտակարգերի համագործակցությունը։

Իր մարտական զինակիցների հետ բոլոր խնդիրները քննելուց ու վերլուծելուց հետո, Բաղրամյանը որոշեց հարձակումը իրականացնել երեք փուլով։ Առաջին փուլում հակառակորդի պաշտպանությունը պետք է ճեղքվեր «Հյուսիս» և «Կենտրոն» բանակների միացման 25 կմ հատվածում՝ Բոլոտովկա բնակավայրից մինչև Տոշնիկ, երկրորդ փուլում՝ գետանցել Արևմտյան Դվինան և Բելոռուսական երրորդ ռազմաճակատի 39-րդ բանակի համագործակցությամբ Վիտեբսկի շրջանում շրջապատել և ոչնչացնել թշնամու խմբավորումը, երրորդ փուլում՝ գրավել Պոլոցկ, Լեպել և Կամեն քաղաքները։

«Ես, իհարկե, մազաչափ չէի կասկածում,—գրում է Հ. Բաղրամյանը,— մեր որոշման իսկությանը և առանձնապես տեղանքի բոլոր մանրամասներն ուսումնասիրողներին պարզ էր, որ զորքերի հարձակումը չէր կարող իրականացվել ճեղքման ամբողջ լայնքով (խանգարում էին ճահիճները և ճահճակալած տարածությունները), քանի որ զորքերի նշանակալի մասը ստիպված կլիներ հարձակվել տարբեր ուղղություններով։ Իսկ այդ նշանակում է, որ փաստացիորեն այդ ուղղություններում զորքերի հարվածային ուժը կլիներ ճիշտ այնպես, ինչպես որ այդ նույն զորքերը ճեղքումն իրականացնեին

5 Ռուսաստանի դաշնության Պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴ ՊՄԿԱ), ֆ. 235, ց. 2086, գ. 368, թ. 4։

ավելի նեղ ճակատով։ Դրա համար էլ ճեղքման լայն գոտին հարձակվողի համար ապահովում էր վերադասավորվելու հնարավորություն»[6]։

1944 թ. հունիսի 22-ին Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը սկսեցին հետախուզական մարտեր, իսկ հաջորդ օրը՝ հունիսի 23-ին, հրետանային ու ավիացիոն ուժեղ նախապատրաստությունից հետո անցան հարձակման։ Սկսվեց Բելոռուսիայի լրիվ ազատագրումը դերմանա-ֆաշիստական զավթիչներից։ Ընդհանուր հարձակումն այդ ուղղությամբ շատ շշմեցուցիչ էր ու հանկարծակի թշնամու համար։ Այդ մասին են վկայում նաև գերմանական ռազմական մասնագետները։ «Հատկապես լարված էր,—գրում է գերմանական գեներալ Կ. Տիպելսկիրխը,—հարձակումը Վիտեբսկից հյուսիս-արևմուտք, բացի այդ, ի տարբերություն մյուս ռազմաճակատների հարվածների, այն միանգամայն հանկարծակի էր»[7]։ Մինչև օրվա վերջը ռազմաճակատի հրամանատարը անընդհատ տեղեկություններ էր ստանում ռազմաճակատի տարբեր հատվածներից հարձակման ընթացքի մասին և բանակի հրամանատարներին տալիս անհրաժեշտ ցուցումներ, փոխկապակցում նրանց գործողությունները։ Առաջիկա օրվա բոլոր լուրերը ուրախալի էին։ Եվ դա հաստատումն էր այն բանի, որ օպերացիայի նախապատրաստման գործում նրա և իր զնակիցների ներդրած մեծ ջանքերն ու անքուն գիշերները իզուր չեն անցել։ Հարձակման ընթացքը շատ հաջող էր, ճեղքվել էր հակառակորդի պաշտպանությունը և զորքերը մոտենում էին Արևմտյան Դվինային։

Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը հարձակման առաջին օրը ջախջախելով թշնամու 252-րդ և 56-րդ հետևակային դիվիզիաները 30 կմ ճակատով, առաջ շարժվեցին 12—16 կմ։ Ազատագրվեցին 185 բնակավայր, այդ թվում ուժեղ ամրացված դիմադրության հանգույցներ Սիրոտինո և Շումիլինո քաղաքները։ Մեկ օրվա ընթացքում ոչնչացվեց հակառակորդի 5000 և գերի վերցվեց 350 զինվոր ու սպա[8]։ Հարձակվող 43-րդ և 6-րդ գվարդիական բանակներին մեծ աջակցություն ցույց տվեցին ռազմաճակատի 3-րդ ավիացիոն բանակի օդային միավորումները։ Այդ օրը խփվեց թշնամու 11 ինքնաթիռ[9]։ Զորքերը, չիջեցնելով հարձակման տեմպը, հաջորդ օրը 50 կմ ճակատով դուրս եկան Արևմտյան Դվինա և սկսեցին գետանցումը։ Հունիսի 25-ին 43-րդ բանակը, գեներալ Ա. Պ. Բելոբորոդովի հրամանատարությամբ ազատագրեց Բեշենկովիչի քաղաքը և Գնեզդիլովիչի շրջանում միացավ Բելոռուսական 3-րդ ռազմաճակատի գեներալ Ի. Ի. Լյուդնիկովի 39-րդ բանակին, աքցանի մեջ առնելով թշնամու Վիտեբսկյան խմբավորումը։ Երկու բանակների սերտ համագործակցությամբ հաջորդ օրը Վիտեբսկը ազատագրվեց։ Հունիսի 27-ին Վիտեբսկի շրջանում շրջապատված թշնամին անձնատուր եղավ։

Վիտեբսկի ազատագրման և ձեռք բերված մեծ հաղթանակի համար Մոսկվան հրավառություն տվեց Մերձբալթյան առաջին և Բելոռուսական 3-րդ ռազմաճակատների պատվին։ Գերագույն գլխավոր հրամանատար Ստալինը հեռախոսով կապվեց Հ. Բաղրամյանի հետ և անձամբ շնորհավորեց նրան թշնամու դեմ տարած մեծ հաղթանակի առթիվ։ Հ. Բաղրամյանը, օգտվելով առիթից, խնդրեց թույլատրել առավել աչքի ընկածներին ներկայացնել Խորհրդային Միության հերոսի կոչման[10]։ Ռազմաճակատի 145 ռազմիկների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։

Ռազմաճակատի զորքերը մարտերով անցան 115—130 կմ, առաջխաղացման միջին տեմպը հասցնելով 14,5—16,5 կմ, պլանով նախատեսված 7,5—

---

6 «Военно-исторический журнал», 1961, № 4, с. 26.

7 К. Типелскирх. История Второй мировой войны. М., 1956, с. 443.

8 ՌԴ ՊՄԿԱ, ֆ. 235, ց. 2074, գ. 846—847, թ. 11—12։

9 Նույն տեղում։

10 «Военно-исторический журнал», 1961, № 5, с. 21.

8,5-ի փոխարեն[11]։ Հուլիսի 4-ին ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակը ազատագրեց երկաթուղային ու խճուղային խոշոր կենտրոն Պոլոցկ քաղաքը և շարունակեց հարձակումը Դաուգավպիլս—Կաունաս ուղղություններով։

Հարձակողական գործողությունների առաջին փուլում 1944 թ. հունիսի 23-ից մինչև հուլիսի 4-ը Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը մարտերով առաջ շարժվեցին 200 կմ, ազատագրեցին Բելոռուսիայի 3670 բնակավայր, այդ թվում Սիրոտինո, Շումիլինո, Զաշնիկի, Լեպել, Պուստոշի, Կրուպենինո, Ուշաչի, Դրույա, Բրասլավ քաղաքները, դիմադրության խոշոր հենակետեր՝ Վիտեբսկ և Պոլոցկ քաղաքները, գետանցեցին Արևմտյան Դվինան ու Դիսնան[12]։

Լիտվական սահմանին մոտենալու կապակցությամբ և ստեղծված օպերատիվ նոր իրադրության պայմաններում գեներալ Բաղրամյանը առաջադրեց իր մշակած հարձակման պլանը, որտեղ նպատակահարմար էր գտնում ռազմաճակատի ուժերի մի մասով հարվածել թշնամու Շյաուլյայի խմբավորմանը, իսկ գլխավոր ուժերով՝ Ռիգայի ուղղությամբ։ Պլանի լրջականացման դեպքում թշնամու «Հյուսիս» բանակների խումբը Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի ուժեղ հարվածի շնորհիվ կբաժանվեր երկու մասի, կկտրվեր դեպի Արևելյան Պրուսիա տանող, Լատվիայում և Էստոնիայում գտնվող թշնամու հիմնական ուժերի նահանջի ճանապարհը, իսկ հետո Մերձբալթյան ռազմաճակատները սերտ համագործակցությամբ մաս-մաս կջախջախեին ու կոչնչացնեին թշնամու ուժերը։

Հակառակ սպասածին, Ռազմակայանը հուլիսի 4-ին հարձակման այնպիսի պլան առաջադրեց, որը ծանր հարվածի տակ կդներ ռազմաճակատի զորքերին։ Նոր դիրեկտիվով պահանջվում էր գլխավոր ուժերով հարձակվել Կաունաս, իսկ ուժերի մի մասով՝ Պանևեժիս—Շյաուլյայ։ «Մերձբալթյան 1-ին ռազմաճակատը,—գրում է Հ. Բաղրամյանը,—պարզապես ի վիճակի չէր լինի (այդպես եղավ գործնականում) գլխավոր ուժերով հարձակվել Կաունասի ուղղությամբ, քանի որ նրա վրա դամոկլյան սրի պես կախված էր թևի և խոր թիկունքի ուղղությամբ «Հյուսիս» բանակների խմբի կողմից հարված հասցնելու վտանգը»[13]։ Մարտական գործողությունների ընթացքը ցույց տվեց առաջադրված պլանի անիրական լինելը և թեև ուշացումով, Ռազմակայանը փոխեց գլխավոր հարվածի ուղղությունը։

Ռազմակայանի կողմից Հ. Բաղրամյանին հանձնված 2-րդ գվարդիական և 51-րդ բանակների ռազմաճակատի գծին մոտենալու կապակցությամբ Ա. Մ. Վասիլևսկին արդեն տեղյակ էր, որ թշնամին մտադրություն չունի իր զորքերը դուրս հանել Մերձբալթիկայից, ուստի նա գտավ, որ նպատակահարմար չէ գլխավոր ուժերով հարձակվել Կաունասի ուղղությամբ[14] և իր վրա վերցնելով պատասխանատվությունը՝ թույլատրեց Հովհաննես Բաղրամյանին գլխավոր հարվածի ուղղությունը փոխել Շյաուլյայ։ Հուլիսի 29-ին այդ որոշմանն իր համաձայնությունը ավեց նաև Գերագույն գլխավոր հրամանատարությունը[15]։

Մերձբալթյան 1-ին ռազմաճակատը, կատարելով ուժերի վերախմբավորում և իր կազմում ընդունելով 2-րդ գվարդիական (հրամ. գեներալ Պ. Գ. Զանչիբաձե) և 51-րդ (հրամ. գեներալ Յա. Գ. Կրեյզեր) բանակները, հուլիսի 20-ին ուժերի մի մասով վերսկսեց հարձակումը արդեն Շյաուլյայ ուղղությամբ։ Ռազմաճակատի զորքերը երեք օրում առաջ շարժվեցին 55 կմ և հուլիսի 22-ին գրոհով գրավեցին Պանևեժիսը։ Հատկապես համառ մարտեր ծա-

---

11 ՌԴ ՊՄԿԱ, ֆ. 235, ց. 2074, գ. 846, 847, թ. 21։

12 Նույն տեղում, թ. 11—21։

13 «Военно-исторический журнал», 1962, № 10, с. 6.

14 Գերագույն գլխավոր հրամանատարության Ռազմակայանի որոշմամբ հարձակումը պետք է շարունակվեր Կաունասի ուղղությամբ։

15 «Военно-исторический журнал», 1962, № 10, с. 18.

վալվեցին Շյաուլյայի շրջանում։ Մի շարք հակագրոհներից հետո ուժասպառ եղած, բայց այնուամենայնիվ կատաղիորեն դիմադրող թշնամին հուլիսի 27-ին թողեց Շյաուլյայը[16]։

Ռազմաճակատի 51-րդ բանակը և 3-րդ մեքենայացված կորպուսը, շարունակելով հարձակումը, ընդհուպ մոտեցան Ելգավային, բայց միանգամից գրավել այն չկարողացան։ Այդ ժամանակ Հ. Բաղրամյանը 3-րդ գվարդիական մեքենայացված կորպուսի հրամանատարին հրամայեց հիմնական ուժերով 51-րդ բանակի հետ միասին շարունակել մարտերը Ելգավայի գրավման համար, իսկ տանկային մեկ բրիգադով գրավել Տուկումսը։ Տանկային բրիգադը Կրեմերի հրամանատարությամբ հուլիսի 30-ին գրավեց Տուկումսը և Կլապկալնսի շրջանում դուրս եկավ Բալթիկ ծով[17]։ Նույն օրը ինքնաթիռից ցած նետվեց վիմպել, կորպուսի հրամանատարի հրամանի հետ միասին՝ Բալթիկ ծովից վերցնել երեք շիշ ջուր, բրիգադի հրամանատարի ստորագրությամբ հաստատել, որ այն իսկապես վերցված է Բալթիկ ծովից և ուղարկել կորպուսի շտաբը[18]։ Հ. Բաղրամյանն այդ շշերը ուղարկեց Ռազմակայան։ Պաշտպանության պետական կոմիտեի հերթական խորհրդակցության ժամանակ շշերը դրված էին սեղանին, որպես իրեղեն ապացույցներ, որ Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի զորքերը դուրս են եկել Բալթիկայի ծովափը։

Ռազմաճակատի զորքերի հարձակողական գործողությունները հմտորեն ղեկավարելու, թշնամուն ծանր պարտություններ մատնելու և ստրատեգիական մեծ հաջողությունների հասնելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։

Թշնամին Արևելյան Պրուսիայի հետ կապը վերականգնելու համար ստիպված դիմեց կտրուկ միջոցների, որոշվեց Բիրժայի շրջանից ուժեղ հակահարված հասցնել Մերձբալթյան առաջին ռազմաճակատի թիկունքին։ Օգոստոսի 2-ին թշնամու զորքերը, անցնելով հարձակման, սկզբնական շրջանում հասան տակտիկական մասնակի հաջողությունների, սակայն հետագայում զարգացնել այն չկարողացան։ 6-րդ գվարդիական և 43-րդ բանակները ետ մղեցին թշնամու բոլոր հակագրոհները, թույլ չտվեցին նրան շարժվելու դեպի Պանևեժիս և օգոստոսի 6-ին նորից գրավեցին Բիրժայը[19]։ Մերձբալթիկայում կորցրածը նորից վերականգնելու համար հիտլերյան հրամանատարությունը դիմեց վճռական միջոցների։ Նա ռազմաճակատի մյուս հատվածներից տանկային ու հրետանային նոր ուժեր փոխադրեց Շյաուլյայ։ Այստեղ կենտրոնացվեցին նաև իր տրամադրության տակ եղած պահեստային ուժերը, նպատակ ունենալով տանկային կործանիչ հարված հասցնել Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերին։ Հետախուզության միջոցով ռազմաճակատի հրամանատարությունը, ժամանակին կռահելով թշնամու մտադրությունը, հակամիջոցներ ձեռնարկեց թշնամու տանկային լավային դիմադրելու համար։ Օգոստոսի 16-ին թշնամու տանկային խումբը 150 տանկերով ու ինքնագնաց թնդանոթներով, ավիացիայի ու հրետանու աջակցությամբ հակահարձակման անցավ սկզբում հարավ-արևմուտքից՝ Կելմեի, Շյաուլյայի, Տուկումսի, իսկ հետո հյուսիս-արևմուտքից՝ Աուցե—Ծագարե ուղղություններով Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերի դեմ[20]։ Սկսվեցին համառ ու կատաղի մարտեր։ Թշնամու տանկային ստորաբաժանումները ռազմաճակատի որոշ հատվածներում ճեղքեցին խորհրդային զորքերի պաշտպանությունը և 10—12 կմ առաջ շարժվեցին։ Խորհրդային հրամանատարությունը շտապ

---

16 «Сообщения Советского информ. бюро». М., 1965. Т. 7, с. 28.

17 ՌԴ ՊՄԿԱ, ֆ. 235, ց. 2074, գ. 849, թ. 39, 42։

18 А. М. Самсонов. От Волги до Балтики, 1942—1945. М., 1963, с. 339.

19 ՌԴ ՊՄԿԱ, ֆ. 235, ց. 2074, գ. 351, թ. 17։

20 Նույն տեղում, թ. 108։

կարգով Շյաուլյայի շրջանը տեղափոխեց 5-րդ գվարդիական տանկային բանակը և հուժկու հակահարվածով ստիպեց թշնամուն դադարեցնել առաջխաղացումը։

Թշնամուն հաջողվեց միայն ծանր կորուստների գնով նորից գրավել Տուկսումսը և 30 կմ միջանցքով վերականգնել ցամաքային կապը Արեելյան Պրուսիայի հետ, որը հետագայում վճռական դեր խաղաց փրկելու «Հյուսիս» բանակների խումբը գլխովին ջախջախվելու վտանգից։

Օգոստոսի 15-ից 25-ը պաշտպանական մարտերի ընթացքում Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի զորքերը ոչնչացրին 15500 գերմանական զինվոր ու սպա, 354 տանկ, 26 ինքնագնաց հրանոթ, 268 հրանոթ, 111 ականանետ, 514 գնդացիր և գրավեցին մեծ քանակությամբ ռազմավար։ Ջախջախվեցին 4-րդ, 5-րդ, 7-րդ, 12-րդ, 14-րդ, «Մեծ Գերմանիա» տանկային դիվիզիաները, 101-րդ ու «Գրոս» տանկային բրիգադները[21]։ Այն ժամանակ, երբ Շյաուլյայի շրջանում մեր զորքերը պաշտպանական ծանր մարտեր էին մղում թշնամու դեմ, հաջող էր զարգանում ռազմաճակատի աջ թևում 43-րդ բանակի հարձակումը, որը Ռիգայի ուղղությամբ առաջ շարժվեց 70—80 կմ։

Օգոստոսի վերջին արյունաքամ և ուժասպառ եղած գերմանական զորքերը դադարեցրին հարձակումը և անցան խոր պաշտպանության։

Հարձակողական ռազմական բոլոր օպերացիաներում ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հ. Բաղրամյանն իրեն դրսևորեց հմուտ ռազմագետ, տաղանդավոր զորավար ու կազմակերպիչ։ Նա կարողացավ ստրատեգիական ամենաբարդ պայմաններում ճիշտ կողմնորոշվել ու ռազմական խոշոր օպերացիաներ ղեկավարելիս ցուցաբերել ինքնուրույնություն և անձնական նախաձեռնություն։ Հ. Բաղրամյանը գիտեր նաև Գերագույն գլխավոր հրամանատարությանն առաջադրել իր մտահղացումներն ու նկատառումները, ինչպես և ծանր ու դժվարին պայմաններում հաջողությամբ լուծել տակտիկական ամենապատասխանատու խնդիրները ու պատվով կատարել Գերագույն գլխավոր հրամանատարության առաջադրանքները։

Հ. Բաղրամյանը խստապահանջ էր ենթակաների նկատմամբ, հետևում էր, որ յուրաքանչյուր հրամանատար հանձնարարված գործին վերաբերվի պատասխանատվության մեծ զգացումով, լինի կարգապահ և օրինակ ծառայի ուրիշների համար։ Նրա խստապահանջությունը ենթակաների նկատմամբ զուգորդվում էր հարգալից ու քաղաքավարի վերաբերմունքի հետ։ Եվ դա էր պատճառը, որ նա մեծ հեղինակություն էր վայելում իր զինակիցների շրջանում։ Նրա ղեկավարած զորքերի բոլոր օղակներում տիրում էր բարձր կազմակերպվածություն ու կարգապահություն։ Ռազմական օպերացիաները շտաբներում պլանավորվում և գործնականորեն իրականացվում էին խիստ գաղտնի պայմաններում։ Թշնամուն հասցվող նրա հարվածները միշտ հանկարծակի էին ու շեշտակի։ Մարտական գործողությունների ընթացքում Հ. Բաղրամյանը մշտապես գտնվում էր հրամանատարական կետում, ուշադիր հետևում էր զորամիավորումների ու զորամասերի հարձակմանը, լսում զեկուցագրեր, համապատասխան ուղղություն ցույց տալիս, անհրաժեշտության դեպքում լինում ռազմաճակատի առաջավոր գծում, իսկ երբեմն էլ, հարկ եղած դեպքում, ելնելով իրադրությունից, բանակի հրամանատարի վիճակը թեթևացնելու համար իր անմիջական հրամանատարության տակ էր վերցնում միավորման ղեկավարումը։ Այսպես վարվեց նա Պոլոցկի ազատագրման համար մղված մարտերի ժամանակ։ 6-րդ գվարդիական բանակի 28-րդ գվարդիական կորպուսը հուլիսի սկզբին հաղթահարելով անտառաճահճային տեղանքը և միևնույն ժամանակ ետ մղելով հակառակորդի կատաղի հակագրոհները շարժվում է դեպի Պոլոցկ։ Հ. Բաղրամյանը, հաշվի առնելով այդ կորպուսի արագ առաջշարժման կարևորությունը, իր անմիջական ենթակայության տակ վերցրեց կորպուսը և դրանով ոչ միայն արագացրեց Պոլոցկի

21 Նույն տեղում, էջ. 3, 108։

ազատագրումը, այլև մեծապես օգնեց 6-րդ գվարդիական բանակի հրամանատարին՝ գեներալ Գ. Մ. Զիստյակովին, կատարել իր առջև դրված մարտական խնդիրները[22]։

Բաղրամյանը շատ էր հպարտանում իր ենթակայության զորամիավորումներում թշնամու դեմ հերոսաբար կռվող հայրենակիցների անձնուրաց սխրանքներով։ Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի տարբեր զորամասերի կազմում «Բագրատիոն» հարձակողական օպերացիային մասնակցեցին հազարավոր հայ ռազմիկներ՝ շարքային մարտիկներից մինչև բարձր հրամկազմը։

«Բագրատիոն» հարձակողական օպերացիայի ամբողջ ընթացքում իրենց մարտական դրոշները փառքով պսակեցին հայկական 76-րդ հրաձգային դիվիզիան, որը ստալինգրադյան ճակատամարտից հետո վերակազմվել էր 51-րդ գվարդիականի[23] և սփյուռքահայության միջոցներով կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։ Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերից հետո 51-րդ գվարդիական դիվիզիայի հայ ռազմիկների շարքերը շատ նոսրացել և դարձել էին ինտերնացիոնալ։ 1944 թ. հունիսի վերջերին, միայն Արևմտյան Դվինայի գետանցման ժամանակ մարտերում ցուցաբերած խիզախության ու արիության համար դիվիզիայի 15 ռազմիկների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ Նրանց մեջ էր հայ ժողովրդի պանծալի զավակ Արամայիս Սարգսյանը։ Աչքի ընկան կապիտան Սուրեն Գևորգյանը, ավագ լեյտենանտ Իվան Եսայանը, մարտիկներ Գուրգեն Ավետիսյանը, Արամ Մանուկյանը, Սուրեն Շոգոյանը, Սեմյոն Թոնյանը և շատ ուրիշներ։

1944 թ. հունիս-օգոստոս ամիսներին 51-րդ գվարդիական դիվիզիան հասավ մարտական բարձր ցուցանիշների։ Դիվիզիան մասնակցեց Զարասայ, Դաուգավպիլս և ժագարե քաղաքների ազատագրմանը։ Եվ այդ ամբողջ ընթացքում միավորման հետ համագործակցում ու աջակցում էր «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, շարունակելով հաղթարշավը, մասնակցեց Շյաուլյայի շրջանում թշնամու խոր էշելոնացված պաշտպանության ճեղքմանը և իր գործողություններով նպաստեց 5-րդ գվարդիական տանկային բանակի ստորաբաժանումների հաջող հարձակմանը։ Դրանից հետո գունդը տեղափոխվեց Պանևեժիսի շրջանը և մինչև օգոստոս ամիսը գտնվում էր ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հ. Բաղրամյանի ենթակայության տակ. պատրաստ ետ մղելու թշնամու հակագրոհները Ելգավա—Աուցե ուղղությամբ։ Լինելով առանձին տանկային գունդ, այն նետվում էր ռազմաճակատի ամենապատասխանատու և ամենավճռական տեղամասերը։ Նրա մարտական ուղին էր Գորոդոկ, Բեշենկովիչի, Պոլոցկ, Դաուգավպիլս, Պանևեժիս, Պասվալիս, Ելգավա։ Մարտերի ընթացքում տանկիստները, գործողություններ համատեղելով հետևակի հետ, դրսևորեցին հերոսության օրինակներ և ցույց տվեցին, որ իրենք արժանի են կրելու հայ ժողովրդի դյուցազն Սասունցի Դավթի անունը։ Գնդի անձնակազմից 200 հոգի պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով[24]։ Տանկային զորամասի դրոշի ներքո մարտնչող, ճանաչված ռազմիկներ Մախորկինի, Դրոպուտի, Խոխլովի, Սերգեեվկոյի, Պոմյատինի և ուրիշների հետ ուսուսի հերոսաբար կռվեցին նաև մեր ժողովրդի զավակները՝ Վասիլի Զոբանյանը, Լուսեղեն Բերեկչյանը, Սարգիս Նահապետյանը, Միխայիլ Ստեփանյանը, Ալեքսեյ Տոնոյանը և ուրիշներ։

Մերձբալթյան առաջին ռազմաճակատի հարձակման գոտում զորքերի կենտրոնացման, տեղաբաշխման, դիրքավորման, կրակակետերի ընտրման,

---

22 Նույն տեղում, գ. 846—847, թ. 20։

23 Կ. Ա. Հարությունյան. 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին. Երևան, 1983։

24 ՌԴ ՊՄԿԱ, ֆ. 235, ց. 2074, գ. 82, թ. 122։

ինչպես նաև հանկարծակիությունը ու թշնամու պաշտպանությունը ճեղքելու հաջողությունը ապահովելու գործում ակտիվ մասնակցություն ունեցան ռազմաճակատի ու բանակների շտաբներում ծառայող շատ հայ սպաներ։

Բելոռուսիայի հարձակողական օպերացիայի նախապատրաստման դժվարին ու լարված օրերին շատ նուանդուն էր աշխատում 43-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական, մարտական բավականին փորձ ձեռք բերած նալբանդցի 25-ամյա մայոր Խաչիկ Մինասի Համբարյանը։ Բանակի շտարը նրան գործուղեց Կոզոնովի շրջանը, ուր պետք է դիրքեր գրավեին 60-րդ հրաձգային կորպուսի միավորումները։ Նա 15 օր կորպուսի հրամանատարի հետ միասին որպես բանակի շտաբի ներկայացուցիչ, մեծ համառությամբ ու ջանասիրությամբ ապահովեց զորքերի գաղտնի կենտրոնացումը նախատեսված հատվածներում[25]։ Կատարված աշխատանքը տվեց իր արդյունքները։ Հարձակման առաջին օրը՝ հունիսի 23-ին կորպուսի 235-րդ և 334-րդ հրաձգային դիվիզիաները հրետանային նախապատրաստությունից հետո հուժկու գրոհով կոտրեցին հանկարծակի եկած թշնամու համառ դիմադրությունը Նովո-Իգումենշչինա և Ուժլյատինա հատվածում 16 կմ ճակատով ճեղքեցին թշնամու պաշտպանությունը և առաջ շարժվեցին 10 կմ[26]։

Օպերացիայի նախօրյակին 43-րդ բանակի հրետանու հրամանատարի տեղակալ նշանակվեց ցարական բանակի նախկին պրապորշչիկ, ռուսական կայսրության համար մարտնչած, Առաջին համաշխարհայինի բազմակի ճակատամարտերի մասնակից «Գեորգևյան 4-րդ», «Վլադիմիրի 4-րդ», «Աննայի 3-րդ», և «Ստանիսլավի 3-րդ» աստիճանների շքանշանների ասպետ, վերինարտաշատցի գնդապետ Կարապետ Վարդանի Հախնազարյանը, որը և անմիջապես ընդգրկվեց օպերացիայի նախապատրաստման աշխատանքների մեջ և դարձավ նրա հաջող իրականացման ակտիվ մասնակիցներից մեկը։ Նա այդ օրերին հանգիստ չուներ։ Անընդհատ զորամասից զորամաս էր անցնում, փոխգործողությունն ապահովելու համար հանդիպում դիվիզիաների հրամանատարների հետ, իր արժեքավոր խորհուրդներով օգնում և ուղղություն էր ցույց տալիս բանակի հրետանային միավորումների ու ստորաբաժանումների հրամանատարներին՝ կրակակետերի ու դիտակետերի ճիշտ ընտրման, կենտրոնացված նշանավոր հարվածի, հարձակվող հետևակի ու տանկերի համագործակցության և այլ մասնագիտական հարցերի վերաբերյալ։ Մարտական գործողությունների առաջին փուլում նա բարդ իրադրության պայմաններում դրսևորեց մարտական իրադրությունը ճիշտ գնահատելու և վճռական պահին հիմնավորված որոշումներ ընդունելու ընդունակություններ։

Հունիսի 23-ին 43-րդ բանակի հրետանային միավորումները և ստորաբաժանումները այնպիսի հուժկու հարված հասցրին թշնամու պաշտպանության բնագծերին, որ կաթվածահար առին նրան, դրանով օգնելով հարձակվող հետևակին արագ հաղթահարելու նախօրոք կառուցված պաշտպանական ամրությունները։

43-րդ բանակի հրամանատար, գեներալ Ա. Պ. Բելոբորոդովը ուներ իր ենթակայության տակ գտնվող զինվորական կազմերի մասնագիտական ունակությունները ընկալելու և ճանաչելու լավ դպրոցություն։ Նա հարձակողական օպերացիայի սկզբնական ընթացքում նկատեց փորձված հրետանավորին և նրա ռազմական գիտելիքները ավելի արդյունավետ օգտագործելու համար Կարապետ Հախնազարյանին հուլիսի սկզբին նշանակեց առաջին հրաձգային կորպուսի հրետանու հրամանատար։ Կորպուսի միավորումները Ա. Մ. Վասիլևի հրամանատարությամբ շատ հաղթանակներ տարան թշնամու դեմ Բելոռուսիայում և Մերձբալթիկայում և դրանում իր ներդրումն ունի նաև գնդապետ Կարապետ Հախնազարյանը, որի համար էլ նա 1944 թ. հուլիսի 17-ին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։

---

25 Նույն տեղում, դ. 6140, թ. 300։

26 Նույն տեղում, ֆ. 235, ց. 2074, գ. 846—847, թ. 12։

Մերձբալթյան առաջին ռազմաճակատում հակառակորդին մարդկային ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ պատճառեցին գեներալներ Բագրատ Առուշանյանի, Ավետիք Բուռնազյանի, գնդապետներ Միքայել Մանուկյանցի, Արտաշես Աբրահամյանի, Հաբեթնակ Սաֆարյանի, փոխգնդապետ Գրիգոր Ամիրջանյանի ղեկավարած զորամասերն ու ստորաբաժանումները։

Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի զորքերը բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի հրամանատարությամբ պատվով կատարեցին Ռազմակայանի առաջադրած մարտական խնդիրները և հաջողությամբ ավարտեցին «Բագրատիոն» հարձակողական օպերացիան։ Զորավարի զորքերը հարձակողական գործողությունների ամբողջ ընթացքում, հունիսի 23-ից մինչև օգոստոսի 15-ը ազատագրեցին 17966 բնակավայր, ոչնչացրին 111000 գերմանական զինվոր ու սպա, 746 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 1090 թնդանոթ, 666 ականանետ, 4400 գնդացիր, 3700 ավտոմեքենա, 120 պահեստ։ Գրավեցին 171 տանկ, 15 ինքնագնաց հրանոթ, 80 թնդանոթ, 259 ականանետ, 1850 գնդացիր, 3435 ավտոմեքենա, 360 պահեստ, դերի վերցրին 15650 հիտլերական։ Իսկ պաշտպանական մարտերի ընթացքում, որ սկսվեցին օգոստոսի 12-ից և շարունակվեցին մինչև 31-ը՝ գեներալ Բաղրամյանի զորքերը ոչնչացրին 27600 հիտլերական, 1000 տանկ, 208 թնդանոթ, 438 գնդացիր, 126 ինքնաթիռ, 83 զրահամեքենա, 872 ավտոմեքենա և այլ ռազմական տեխնիկա[27]։

Մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան 1944 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 31-ը վեց անգամ 224 հրանոթից 24 համազարկ տվեց բանակի գեներալ Բաղրամյանի զորքերի պատվին, ողջունելով նրանց թշնամու դեմ տարած փայլուն հաղթանակների համար։ Վեց անգամ նրա անունը հիշատակվեց Գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում։

Առջևում Մեմելյան և Քյոնիգսբերգյան օպերացիաներն էին, որոնք նոր փառք բերեցին տաղանդավոր զորավարին։

УЧАСТИЕ И. Х. БАГРАМЯНА В НАСТУПАТЕЛЬНОЙ ОПЕРАЦИИ «БАГРАТИОН»

М. Г. СААКЯН

Резюме

Одна из крупнейших военных операций Второй мировой войны — Белорусская наступательная операция «Багратион» — была подготовлена Ставкой Советского Верховного командования и осуществлена с июня по август месяц 1944 г. В разработке этой операции наряду с видными советскими военачальниками Г. К. Жуковым, А. М. Василевским, К. К. Рокоссовским, И. Д. Черняховским активно участвовал командующий I Прибалтийским фронтом генерал армии И. Х. Баграмян. В ходе этой операции войска I Прибалтийского фронта в тесном взаимодействии с войсками I, II, III Белорусских фронтов прорвали укрепленную оборону противника, освободили северные районы Белоруссии и часть Литвы и Латвии. За блестящие победы войск I Прибалтийского фронта Ивану Баграмяну было присвоено звание Героя Советского Союза.

---

27 Նույն տեղում, գ. 851, թ. 1, 103։